ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

05.09.2023
351-66

Էկոնոմիկայի նախարար
Վահան Քերոբյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քերոբյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2023 թվականի օգոստոսի 7-ի հ/886117 (351-37) հարցմանն ի պատասխան հայտնել էիք, որ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) համար անհատական թույլտվություն տրամադրվել է՝ 2021 թվականին՝ 4 հատ, 2022 թվականին՝ 17 հատ, 2023 թվականին՝ 67 հատ: Խնդրում ենք հայտնել, թե նշվածներից քանի՞սն են տրամադրվել Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) համար՝ ըստ տարիների:
2. Նույն հարցմանն ի պատասխան հայտնել էիք, որ հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) ընդհանուր թույլտվություն է տրամադրվել՝ 2023 թվականին՝ 2 հատ: Խնդրում ենք հայտնել, թե նշվածներից քանի՞սն են տրամադրվել Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) համար:
3. Նույն հարցմանն ի պատասխան հայտնել էիք, որ 2022 թվականին մերժվել է հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) 1 հատ, 2023 թվականին 2 հատ թույլտվության տրամադրում: Խնդրում ենք հայտնել՝ մերժումներից քանի՞սն են վերաբերել Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանմանը (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցմանը)՝ ըստ տարիների:
4. Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) մերժումներից քանի՞սն են եղել արտահանման կամ փոխանցման նախատեսվող գործողությունների եւ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովման նպատակի միջեւ հասությունների առկայության հիմքով, ո՞ր միջազգային

փաստաթղթով ստանձնած և ի՞նչ միջազգային պարտավորությունների կատարման ապահովման նպատակին հակասության հիմքով է եղել մերժումներից յուրաքանչյուրը:

5. Խնդրում ենք հայտնել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններ սահմանող այն բոլոր միջազգային փաստաթղթերը, որոնք կարող են Ռուսաստանի Դաշնություն հսկվող ապրանքների արտահանման (հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման) արգելքի հիմք հանդիսանալ:
6. Խնդրում ենք տրամադրել 2021, 2022 և 2023 թվականներին ՀՀ-ում անօդաչու թռչող սարքերի արտադրության ծավալները/քանակները՝ ըստ տարիների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան